

ԺԷ

Լեւոնի մահն ու թաղումը



Սուրենյի պալատին մէջ Լեւոն շատ բախտաւոր չեղաւ : Այնտեղ թէեւ ամէն հանգստութիւն կը վայելէր եւ գրեթէ ամէն օր Կարոլոսի հետ կանցընէր , մինչեւ իսկ զիմացի Ս. Պօղոսի եկեղեցին ընկերանալով իր եղբայրակցին (1) , բայց անհամար յուզումներէ ու վիշտերէ հիւժուած՝ 51 տարեկան հասակին մէջ արդէն ծերացած կզգար ինքզինք : Եւ չկարենալով այլ եւս զիմացրել բարոյական հոգերու , անկողին ինկաւ :

Ժամանակագիրք չեն յիշատակեր թէ Լեւոն և որքա՞ն ժամանակ հիւանդ պառկեցաւ : Գիտենք միայն , որ Հայոց վերջին թագաւորը Տուրնէլի պալատին մէջ աւանդեց իր հոգին 1393 թ. նոյեմբ. 29-ի կիրակին : Ասով մարեցա՛ւ Հայոց վերջին պպլացող աստղն ալ , բոլորովին յուսակաւոր ընելով այն ազգը՝ որ գոյութեան իրաւունքն ունեցած է եւ ունի միշտ , մեծամեծ ծառայութիւններ մատուցած ըլլալով ոչ միայն քաղաքակրթութեան այլ եւ մարդկութեան . . .

Լեւոնի վերջին ժամն յուզիչ եղած է : Հայոց թագաւորն զգալով որ մահը մօտեցած է , իր քով գտնուողներուն խրատական խօսքեր ուղղած եւ երկնային արքայութեան ճամբան քարոզած է անդադար . յետոյ՝ աղօթքով , խոստովանութեամբ ու մեծ երկիւղածութեամբ մօտեցած է սուրբ Հաղորդութեան , ինչպէս կը վկայէ Սէն-Իրնիի կրօնաւորն իր Ժարնանակագիրին մէջ , հտ. Բ, եր. 113—115 : Իսկ թագումը կատարուած է , ըստ նոյն Ժարնանակագիրին (Բ, 115) , շատ չքեղ եւ փրօնասցիներու համար խիստ հետաքրքրաշարժ ձեւով , այն է՝ Հայոց թագաւորներու յատուկ թաղման արարողութեամբ ու եղանակով : Ասկէ մղուած՝ Տուրնէլի պալատէն մինչեւ Կեղեատինեանց եկեղեցին — ուր պիտի փոխադրուէր մարմինը — փողոցները գրաւած է երկսեռ բազմութիւնը : Հայոց արքունիքի մեծ ու փոքր պաշտօնակալներն ամբողջովին ձերմալներ հագած՝ իբրեւ սգակիր հետեւած են իրենց տիրոջ զագաղին , որուն ընկերացած են նաեւ ֆրանսական արքունիքի պաշտօնակալներն ու՝ թերեւս՝ Կարոլոս 2 եւս : Ինքը՝

(1) Տուրնէլի հաստատուելէն ի վեր այս եկեղեցին կը յանախէր Լեւոն պատարագ տեսնելու եւ աղօթելու համար , ինչպէս կրնէր նաեւ Կարոլոս 2 :